

## ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

16.11.2022 թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրություն

### Օրակարգ

1. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
2. Ամբիոնների վարիչների դասալսումների արդյունքների ամփոփում:
3. IV կուրսի բակալավրիատի ավարտական թեմաների հաստատում:
4. Առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի հետ կապված աշխատանքների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր

Գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 34-ը: Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ ասպիրանտների և հայցորդների ատեստավորմանը: Նիստին հրավիրվել էին ԵԼՀ ամբիոնների հայցորդներն ու ասպիրանտները, որոնք հակիրճ և բովանդակալից ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքը: **Անգլիական բանասիրության ամբիոնից** ներկայացել էին Զարա Հայրապետյանը, Արաքսյա Ստեփանյանը, Նելլի Սարգսյանը, Միլենա Ավետիսյանը, Վարդուհի Միրիջանյանը, Վարդուհի Ղուկասյանը: **Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնից** ներկա էին Սյուզաննա Գրիգորյանը, Անի Միմոնյանը: **Արտասահմանյան գրականության ամբիոնից**՝ Կատյա Թովմասյանը: **Գերմանական բանասիրության ամբիոնից**՝ Քրիստինա Քոչարյանը:

1.

**ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Արաքսյա Ստեփանյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Արաքսյա Ստեփանյանը (թեման՝ «**Ճամանակակից անգլերենի նորաբանությունների իմաստաճանաչողական հայեցակերպը (հայերենի գուգադրությամբ)**», գիտ. ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Ե. Երզնկյան) ներկայացրեց հաշվետու տարվա ընթացքում կատարած իր աշխատանքի ծավալը: Արաքսյա Ստեփանյանը նշեց, որ սահմանված կարգով հրատարակել է երկու գիտական հոդված «On Some Cognitive Characteristics of English

Neologisms” և “English Neologisms as Indicators of Social Changes”

համապատասխանաբար «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» պարբերականի 1(24) և 1(26) համարներում: Այժմ հրատարակության է պատրաստում «Նորաբանություն» եզրույթի տարբեր ընկալումները» վերտառությամբ հոդվածը: Ուսումնասիրել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Նոր բառեր» բառարանի Ա, Բ և Գ պրակներում (2015, 2016 և 2017) տեղ գտած նորաբանությունները և դասակարգել դրանք ըստ իմաստային խմբերի:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Դրական գնահատելով Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Արաքսյա Ստեփանյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան:  
**2.**

**ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Միրիջանյան ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Միրիջանյանը

(թեման՝ «Իրավաբանական փաստաթղթերի թարգմանության խնդիրը գործառական-հաղորդակցական լույսի ներքո», գիտ. ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Գ.Մուրադյան) ներկայացրեց

հաշվետու տարվա ընթացքում կատարած իր աշխատանքը: Գիտական աշխատանքի թեման

է «Իրավաբանական փաստաթղթերի թարգմանության խնդիրը գործառական-հաղորդակցական լույսի ներքո»: Ենթադրվում է, որ այն բաղկացած կլինի երեք գլխից, համապատասխանաբար՝

1. Պաշտոնական դիսկուրսը գործառական ոճերի համակարգում:
2. Թարգմանության խնդիրները (համընդհանուր) գիտական և պաշտոնական ոճերում:
3. Իրավաբանական փաստաթղթերի թարգմանության խնդիրները: Տպգրության է հանձնված մեկ գիտական հոդված, երկրորդ հոդվածը ընթացքի մեջ է: Առաջին կիսամյակում հանձնել է բոլոր ընթացիկ քննությունները և հավաքել է

կրեդիտների մեծ մասը, երկրորդ կիսամյակում մնացել է հանձնելու երկու առարկա՝ մեկը պարտադիր, իսկ մյուսը՝ ընտրովի:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Միրիջանյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

3.

**ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Ղուկասյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Ղուկասյանը (թեման՝ «**Դիվանագիտական դիսկուրսի լեզվաոճական բնութագիրը**», գիտ. ղեկավար՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Ա. Կնյազյան) ներկայացրեց հաշվետու տարվա ընթացքում կատարած իր աշխատանքի ծավալը: Վարդուհի Ղուկասյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում սահմանված կարգով գրել է աշխատանքի առաջին գլուխը՝ վերնագրված՝ **Դիվանագիտական դիսկուրսի հետազոտությունները լեզվաբանության ժամանակակից հարացույցում**, որը բաղկացած է երկու ենթագլխից՝ 1.Դիվանագիտական դիսկուրսի հետազոտման հայեցակերպը լեզվաբանության մեջ և 2.Դիվանագիտական փաստաթղթերի բնութագիրը: Վերոնշյալ ժամանակահատվածում տպագրվել է երկու հոդված՝ «**Դիվանագիտական դիսկուրսի հետազոտման հայեցակերպը լեզվաբանության մեջ**» (2022թ.), Science and Education a New Dimension գիտական ամսագրի 264-րդ համարում և **երկրորդ հոդվածը՝ Դիվանագիտական փաստաթղթերի դիսկուրսային բնութագիրը**, Աննա Կնյազյանի հետ համահեղինակությամբ , լույս է տեսել «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսում, (2022թ.): Ներկայումս մասնակցում է նախատեսված վերջին երկու դասընթացին՝ 1. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ 2. Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Ղուկասյանին: Որոշումն ընդունվեց միաձայն

**4. ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Ջարա Հայրապետյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Ջարա Հայրապետյանը (թեման՝ «**Լեզուն որպես իրավական դիսկուրսի հասկացման բանալի**», գիտ. դեկավար՝ Բ.գ.դ., պրոֆ. Ս. Գասպարյան) ներկայացրեց հաշվետու տարվա ընթացքում կատարած իր աշխատանքի ծավալը: Ջարա Հայրապետյանը նշեց, որ մասնակցել է ասիպրանտական ծրագրում ընդգրկված տարբեր դասընթացների՝ հանձնելով բոլոր պարտադիր առարկաները՝ «անգլերեն լեզու», «տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» և «գիտական հետազոտությունների մեթոդաբանություն»: Ընտրովի առարկաներից հավաքել է 15 միավոր, մնացել է լրացնելու ընդամենը 5 միավոր, որպեսզի լիովին ավարտվեն դասընթացները: Դա պլանավորել է անել հաջորդ կիսամյակում:

Սույն թվականի փետրվար ամսին մեկնել է Իտալիա և ուսումը շարունակել Վենետիկի Կա Ֆոսկարիի համալսարանում՝ մինչև օգոստոս ամիսը: Այդ ընթացքում, այնտեղի գիտական դեկավարի՝ Ֆրանչեսկա Կոկետայի խորհրդով, ծանոթացել է թեմայի վերաբերյալ նրա կողմից իրեն տրամադրված, ինչպես նաև տեղի գրադարաններում առկա գրականությանը, մանրամասն մշակելով և հավաքելով դրանցում եղած հնարավոր ողջ ինֆորմացիան, որը ներառված է իր՝ տպագրության պատրաստվող հոդվածի հղումներում:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Ջարա Հայրապետյանին : Որոշումն ընդունվեց միաձայն:

**5.**

**ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Միլենա Ավետիսյանի ատեստավորման հարցը:

## **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Միլենա

Ավետիսյանը (թեման՝ «**Բույսերի և կենդանիների անուններով ոճական հնարները Ջերալդ Դարելի ստեղծագործություններում (իտալերենի զուգադրությամբ)**»), գիտ. դեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Ս. Գասպարյան) ներկայացրեց հաշվետու տարվա ընթացքում կատարած իր աշխատանքի ծավալը: Միլենա Ավետիսյանը նշեց, ուսումնասիրել է իր ընտրած հեղինակին. Ջերալդ Դարելը բրիտանացի բնագետ, կենսաբան, բնապահպան, գրող և հեռուստատեսային հաղորդաշարերի հեղինակ է: Ուսումնասիրելով բնագետ Ջերալդ Դարելի ստեղծագործությունները, ինչպես նաև նրա կենսագրական որոշ փաստեր, անհնար է չնկատել դրանց դերը բնության , բուսական և կենդանական աշխարհի, էկոհամակարգի պրոպագանդման և պահպանման գործում, որն էլ բերում է այն կարծիքի, որ Ջերալդ Դարելի ստեղծագործությունները կարող են դիտարկվել այսօր արդեն աստիճանաբար լայն տարածում ստացող, այսպես կոչված էկոլեզվաբանության դաշտում: Նրա ստեղծագործություններից, որոնց մի զգալի մասը թարգմանված է իտալերեն և լայն ընթերցում ունի, այս պահին առայժմ ուսումնասիրում է երկուսը՝ My Family and Other Animals և The Whispering Land վեպերը, որոնք որոշ չափով նաև ինքնակենսագրական են:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Միլենա Ավետիսյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

6.

## **ԼՍԵՑԻՆ՝**

Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նելլի Սարգսյանի ատեստավորման հարցը:

## **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Նելլի Ավետիսյանը (թեմա՝ «**Փոխաբերության ստեղծման և թարգմանության ճանաչողական հայեցակերպը. ինտեգրացված մոտեցում**»), գիտ. դեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Ս. Գասպարյան) հանգամանորեն ներկայացրեց հաշվետու տարվա ընթացքում կատարած իր աշխատանքի ծավալը: Նելլի Սարգսյանը նշեց, որ հաշվետու

Ժամանակահատվածում սահմանված կարգով աշխատել է ատենախոսության երկրորդ գլխի պատրաստման վրա: Տվյալ գլխում քննարկվում են հետևյալ հարցերը.

1. *Դիսկուրսում փոխաբերության հետազոտության վերաբերյալ հերմենևտիկ մոտեցումը.*
2. *Տեքստի իմաստային վերլուծության կարևորությունը կոնցեպտուալ փոխաբերության տեսության մեջ.*
3. *Կոնցեպտուալ փոխաբերության տեսությունը որպես գրական տեքստի հեղինակի անհատականության բացահայտման կորևոր գործոն.*
4. *Փոխաբերության թարգմանության ավանդական մոտեցումները և թարգմանության լեզվաճանաչողական մեթոդների արդյունավետության դիտարկումները:*

Ատենախոսության այս մասի հիմնական նպատակն է պարզաբանել փոխաբերության հասկացութային բնույթի նշանակությունը թարգմանաբանության մեջ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նելլի Ավետիսյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

7.

**Լսեցին՝** Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի 3-րդ տարվա ասպիրանտ Անի Արայի Սիմոնյանի ատեստավորման հարցը (թեմա՝ «Տեղեկատվության բովանդակության և գործիքակազմի բազմազանությունը արդի հանրային խոսքում», գիտ. դեկ.՝ ք. գ. դ., պրոֆեսոր Գ. Մուրադյան):

**Արտահայտվեցին՝** Միջմշակութային հաղորդակցության 3-րդ տարվա ասպիրանտ Ա. Սիմոնյանը նշեց, որ «Multimodality and Multimediality in Contemporary Public Communication» («Տեղեկատվության բովանդակության և գործիքակազմի բազմազանությունը արդի հանրային խոսքում») վերնագրով ատենախոսության առաջին գլուխը լիովին պատրաստ է: Առկա է տեսական նյութ և հիմք հետագա վերլուծական աշխատանքի համար: Ատենախոսի կողմից կատարվել է հանրային խոսքի խորքային վերլուծություն, անդրադարձ է արվել քաղաքական քարոզարշավներին, հեռուստահաղորդումներին և առցանց հարթակներին՝ վերլու-

ծական նյութի հարստացման համար: Նշվեց, որ կատարվում են վերջնական շտկումները երկրորդ գլուխը ավարտին հասցնելու ուղղությամբ: Հրապարակվել են երեք հոդված, և մեկ թեզիս, Ա. Միմոնյանը զեկուցում է կատարել Խարկովի ազգային համալսարանի կողմից կազմակերպված միջազգային առցանց համաժողովում: Առաջին հոդվածը վերնագրված է «Multimodality in Contemporary Communication», որը հանձնվել է տպագրության «Armenian Folia Anglistika» ամսագրում: Երկրորդ հոդվածը հրապարակվել է Եվրոպական համալսարանի գիտական ժողովածուում «Contemporary Media and Public Communication» վերնագրով: Երրորդ հոդվածը հրապարակվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Բանբեր պարբերականում «Multimodality and Multimediality in the Framework of Contemporary Public Discourse» վերնագրով: Նախապատրաստական փուլում է գտնվում ևս մեկ հոդված՝ վերնագրված «Hate Speech and War Discourse».

**Որոշեցին`** Հիմք ընդունելով ասպիրանտի հաշվետվությունը և հաշվի

առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Ա. Միմոնյանին: Որոշումն

ընդունվեց միաձայն:

8.

**Լսեցին`** Միջմշակութային հաղորդակցության անզլերենի ամբիոնի 4-րդ տարվա ասպիրանտ Սյուզաննա Աշոտի Գրիգորյանի ատեստավորման հարցը (թեմա՝ «Հաղորդակցության գործա-ռական-գործարանական բնութագիրը անզլերեն գործարար հարցազրույցում», գիտ. դեկ.՝ Բ. Գ. դ., պրոֆեսոր Շ. Պարոնյան):

**Արտահայտվեցին`** Միջմշակութային հաղորդակցության 4-րդ տարվա ասպիրանտ Ս. Գրիգորյանը նշեց, որ ներկայումս ունի տպագրված երեք հոդված:

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել գործարար հարցազրույցին բնորոշ հաղորդակցական կադապարները և ժանրային օրինաչափությունները, վեր հանել լեզվական և արտալեզվական գործոններով պայմանավորված լեզվագործա-բանական առանձնահատկությունները: Անդրադարձ է արվում հարցազրույցի գրավոր և բանավոր ձևաչափերին: Հաշվետու ժամանակաշրջանում Ս. Գրիգորյանը աշխատել է

տեսական նյութը լուսաբանող գործնական օրինակներ հավաքագրելու ուղղությամբ, որոնց համար աղբյուրներ են հանդիսացել ժամանակակից անգլերեն բանավոր և գրավոր գործարար հարցազրույցները: Նշվեց, որ այժմ Ս. Գրիգորյանը աշխատում է ատենախոսության հիմնադրույթները լուսաբանող ևս մեկ հոդվածի վրա:

**Որոշեցին`** Հիմք ընդունելով ասպիրանտի հաշվետվությունը և հաշվի առնելով

կատարված աշխատանքը` ատեստավորել Ս. Գրիգորյանին: Որոշումն ընդունվեց

միաձայն:

9.

**Լսեցին`** Գերմանական բանասիրության ամբիոնի`2019-2020 ուստարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Քրիստինե Քոչարյանի ատեստավորելու հարցը:

**Արտահայտվեցին`** Ասպիրանտ Ք. Քոչարյանը ներկայացրեց << Մշակութային իրողություններ իրացումը երկխոսություններում ( գերմաներենի , անգլերենի, ռուսերենի նյութի հիման վրա)>> ատենախոսության նախնական կառուցվածքը,քննության ուրվագիծը, ինչպես նաև թեմայի արդիականությունը:

**Որոշեցին`** Հաշվի առնելով ասպիրանտի ` մինչ այժմ կատարած աշխատանքների ծավալն ու որակը, ուսուցման ընթացքում հավաքած կրեդիտները (21 կրեդիտ)` Ք. Քոչարյանին ատեստավորել:Որոշումն ընդունվեց միաձայն:

10.

**Լսեցին`** Արտասահմանյան գրականության ամբիոնի 2022 թ. հայցորդ **Ալվարդ Սամվելի Մայիլյանի** ատեստավորման հարցը:

**Արտահայտվեցին`** Արտասահմանյան գրականության 2022 թ. հայցորդ **Ալվարդ Մայիլյանը**, նշեց, որ իր թեկնածուական ատենախոսության թեման է **«Ժամանակը և տարածությունը Ժան Պոլ Սարտրի գեղարվեստական տիրույթում»** /գիտ. դեկ. դոց. Ա. Սեդրակյան/:Ունի մեկ տպագրված հոդված «Գրականագիտական հանդես»



ամսագրում, գրեթե պատրաստ է ատենախոսական աշխատանքի առաջին գլուխը, տպագրության են պատրաստվում գիտական մյուս հոդվածները:

**Որոշեցին՝** Բավարար համարելով կատարված աշխատանքը, հայցորդ Ալվարդ Սամվելի Մայիլյանին ատեստավորել: Որոշումն ընդունվեց միաձայն:

11.

**Լսեցին՝** Արտասահմանյան գրականության ամբիոնի 2018 թ. հեռակա ասպիրանտ **Կատյա Սամվելի Թովմասյանի** ատեստավորման հարցը:

**Արտասահմանյան գրականության ամբիոնի 2018 թ. հեռակա ասպիրանտ Կատյա Թովմասյան** նշեց, որ իր թեկնածուական ատենախոսության թեման է «**Կոնտրաշակութային» մոտեցումը Չակ Պալանիկի վեպերում**»/ղեկ. դոց. Ն. Գոնչար-Խանջյան/, ունի տպագրված գիտական հոդվածներ ԵՊՀ ԵԼՀ «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» և Մանկավարժական համալսարանի «Science and World» գիտական ամսագրերում: Ընթացիկ տարվա ապրիլին մասնակցել է ամբիոնի կազմակերպած «Պոստմոդեռնիզմը հումանիտար ոլորտներում» միջազգային գիտաժողովի աշխատանքներին՝ հանդես գալով զեկուցմամբ: Պատրաստ է ատենախոսական աշխատանքի շուրջ 80%-ը:

**Որոշեցին՝** Բավարար համարելով կատարված աշխատանքը, Կատյա Թովմասյանին ատեստավորել: Որոշումն ընդունվեց միաձայն:

Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ ամբիոնների վարիչների դասալսումների արդյունքների ամփոփմանը: ԵԼՀ ամբիոնի վարիչները ընդհանուր առմամբ ներկայացրեցին դասապրոցեսին վերաբերող արդյունքները՝ նշելով, որ ամեն ինչ ընթացել է իր բնականոն հունով, արտառոց դեպքեր չեն նկատվել:

ԵԼՀ ֆակուլտետի դեկանը անդրադարձավ օրակարգի երրորդ հարցին՝ IV կուրսի բակալավրիատի ավարտական թեմաների հաստատմանը և խոսքը փոխանցեց փոխդեկան Մ.Յադուբյանին: Փոխդեկանը նշեց, որ IV կուրսի ավարտական աշխատանքների և I կուրսի մագիստրոսական թեզերի թեմաները, ուսանողների և

դասախոսների տվյալները պատրաստ են, և ամեն ինչ ընթանում է ընթացակարգին համապատասխան: Անցում կատարվեց նաև օրակարգի չորրորդ հարցին՝ հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի հետ կապված աշխատանքների քննարկմանը: Նշվեց, որ այս հարցի հետ կապված նույնպես ամեն ինչ ընթանում է ընթացակարգին համապատասխան:

### **Ընթացիկ հարցեր**

Գ.Բարսեղյանը խոսքը փոխանցեց Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Բ.գ.դ., պրոֆեսոր Մ. Ապրեսյանին, ով իր գործընկերների հետ դիմում- առաջարկի նախագիծը ներկայացրեց՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Առաջարկը վերաբերում էր սոց. հարցման արդյունքներից բխող մտահոգություններին: Սոց. հարցման ընթացակարգը ավելի արդյունավետ կազմակերպելու և օբյեկտիվ արդյունքներ ակնկալելու նպատակով ԵՊՀ ռեկտորին ներկայացվել էին մի շարք առաջարկներ: Նշված առաջարկները ընդունվեցին գործընկերների կողմից:

### **Որոշեցին.**

- Երաշխավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ , Բ.գ.թ. Սաթենիկ Սարոյանին դոցենտի կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել Գերմանական բանասիրության ամբիոնի ասիստենտ Նելլի Խանոյանին դոցենտի կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս Լիլյա Վարդանյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել Գերմանական բանասիրության ամբիոնի ասիստենտ Նաիրա Շաչիլվյանին դոցենտի կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:

- Երաշխավորել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս Շուշանիկ Թամրազյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հիմք ընդունելով կատարված աշխատանքը, Արտասահմանյան գրականության ամբիոնի 2018 թ. հեռակա ասպիրանտ Կատյա Թովմասյանին ատեստավորել: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հիմք ընդունելով կատարված աշխատանքը, Արտասահմանյան գրականության ամբիոնի 2022 թ. հայցորդ Ալվարո Մայիլյանին ատեստավորել: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հիմք ընդունելով ասպիրանտի՝ մինչ այժմ կատարած աշխատանքների ծավալն ու որակը, ուսուցման ընթացքում հավաքած կրեդիտները (21 կրեդիտ)՝ Գերմանական բանասիրության ամբիոնի՝ 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ք. Քոչարյանին ատեստավորել: Որոշումն ընդունվեց միաձայն:
  - Հիմք ընդունելով ասպիրանտի հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի 3-րդ տարվա ասպիրանտ Ա. Միմոնյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
  - Հիմք ընդունելով ասպիրանտի հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի 4-րդ տարվա ասպիրանտ Ս. Գրիգորյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
  - Դրական գնահատելով Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Արաքսյա Ստեփանյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան:
  - Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Միրիջանյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

- Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Ղուկասյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Զարա Հայրապետյանին : Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Միլենա Ավետիսյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հիմք ընդունելով հաշվետվությունը և հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նելլի Ավետիսյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հաստատել բակալավրիատի IV և V կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաները: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հաստատել մագիստրատուրայի I կուրսերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ. Դալայան

16.11.2022 թ.